

**ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՅԱՆԸ ԱՐԴԻ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼ
ՄԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ
Ավագ գիտաշխատող, Բ.Գ.Թ., դոցենտ
meri.sargsyan@isec.am

DOI: 10.57236/1829-0183-2023.1(28)-3

Համառոտագիր

Սույն հոդվածում ներկայացվում են հայ լեզվաբանության նշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Էդուարդ Աղայանի գիտական գործունեության առանցքային ուղղությունները՝ զուգակցված կենսագրական իրադարձություններով: Է. Աղայանը թողել է գիտական հարուստ ժառանգություն, անդրադարձել է լեզվաբանության գրեթե բոլոր ոլորտների քննությանը՝ ընդհանուր լեզվաբանություն, հայ լեզվաբանության պատմություն, հայոց լեզվի պատմություն, համեմատական քերականություն, բարբառագիտություն, ժամանակակից հայոց լեզու, Արևելքի գրականության պատմություն և այլն: Նա, իսկապես, հայ լեզվաբանության մեծ երախտավորներ Հ. Աճառյանի, Մ. Աբեղյանի, Գր. Ղափանցյանի, Ստ. Մալխասյանի գործի արժանավոր ու հետևողական շարունակողներից է, հայագիտության հայրենանվեր ավանդների անընդհատությունը սրբությամբ պահպանողներից մեկը: Աղայանի գիտական ժառանգությունը հավերժ լինելու է տարբեր սերունդների ուսումնասիրության և հետազոտության նյութ, լեզվաբանական նյութի աղայանական մատուցմամբ սկսնակ լեզվաբանները մուտք են գործելու լեզվաբանության մեծ աշխարհ:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ Էդուարդ Աղայան, հայ լեզվաբան, գիտական ժառանգություն, լեզվաբանություն, հայագիտություն:

**EDUARD AGHAYAN: A DISTINGUISHED ALTRUIST IN THE
FIELD OF ARMENIAN STUDIES
MERI SARGSYAN**

RA NAS Language Institute
Senior Researcher, Ph.D., Associate Professor
meri.sargsyan@isec.am

Abstract

This article delineates the principal thematic domains of Eduard Aghayan's scientific pursuits, casting a comprehensive light on the career and biographical trajectory of this eminent figure in the field of Armenian linguistics. E. Aghayan left a rich scientific legacy,

that encompasses a broad spectrum of linguistic subdisciplines, inclusive of general linguistics, the historical evolution of Armenian linguistics, the diachronic development of the Armenian language, comparative grammar, dialectology, modern Armenian language, and the historical trajectory of Eastern literature. In the annals of Armenian linguistics, Eduard Aghayan emerges as a steadfast and commendable inheritor of the profound contributions of notable luminaries such as H. Acharyan, M. Abeghyan, Gr. Ghapantsyan, and Malkhasyants, thereby exemplifying a reverent perpetuation of the hallowed tradition of Armenian scholarship. The scholarly opus left behind by Aghayan shall eternally remain a subject of scholarly inquiry and exploration across successive generations. Through his meticulous elucidation of linguistic materials, Eduard Aghayan opens the gateway for burgeoning linguists to embark upon the expansive realm of linguistics.

Keywords and phrases: Eduard Aghayan, Armenian linguist, scientific heritage, linguistics, Armenian studies.

**ЭДУАРД АГАЯН: ВЫДАЮЩИЙСЯ СОЗИДАТЕЛЬ В ОБЛАСТИ
АРМЕНОВЕДЕНИЯ
МЕРИ САРГСЯН**

Институт языка НАН РА

Старший научный сотрудник, к.ф.н., доцент

meri.sargsyan@isec.am

Аннотация

В данной статье рассматриваются основные тематические направления научной деятельности Эдуарда Агаяна, что позволяет всесторонне осветить карьерную и биографическую траекторию этого выдающегося деятеля армянского языкознания. Э. Агаян оставил богатое научное наследие, охватывающее широкий спектр лингвистических субдисциплин, в том числе общее языкознание, историческую эволюцию армянского языкознания, диахроническое развитие армянского языка, сравнительную грамматику, диалектологию, современный армянский язык, историческую траекторию развития восточных литератур. В анналах армянского языкознания Эдуард Агаян предстает как последовательный и достойный наследования глубокий вклад таких выдающихся деятелей, как Г. Ачарян, М. Абемян, Г. Капанцян, С. Малхасянц, являя собой пример благоговейного увековечивания священных традиций армянской науки. Оставленный Агаяном научный опус навечно останется предметом научных поисков и исследований последующих поколений. Своим скрупулезным изложением лингвистических материалов Эдуард Агаян открывает дорогу начинающим лингвистам в обширную сферу языкознания.

Ключевые слова и словосочетания: Эдуард Агаян, армянский лингвист, научное наследие, лингвистика, арменоведение.

«Կար մի տղա՝ մազափունջը ճակատին ընկած, ինձ միշտ հարց էր տալիս. «Պրոֆեսոր, ֆրանսերեն այս բառը ինչպե՞ս է»: Բարկանում էի՝ մտածելով, որ սա մյուս տղայի նման իմ գիտելիքը կասկածի տակ է վերցրել: Բարկանում էի, բայց հարցին պատասխանում էի: Ու մի օր էլ տղան եկավ ինձ մոտ՝ ասելով, որ ինքը ֆրանսերեն է սովորել ու թարգմանել մի տեքստ, խնդրեց, որ ինքը կարդա, ես ստուգեմ, կարդաց ու թարգմանեց: Երբ հարցրի, թե ֆրանսերեն ումից և երբ է սովորել, ասաց. «Պրոֆեսոր, այդ Դուք ինձ սովորեցրիք, շնորհակալություն, կներեք, որ Ձեզ հաճախ անհանգստացնում էի»: Այս ժամանակ վեր կացա, ձեռքս դրի սրտիս ու ասացի. «Այդ ես պետք է ներողություն խնդրեմ, որ քո մասին վատ բան եմ մտածել և դժկամորեն եմ պատասխանել», - այսպես է արտահայտվել լեզվաբանության և հայագիտության հսկաներից մեկը՝ Հրաչյա Աճառյանը, մեկ այլ հսկայի մասին: Բանիմաց ու խելացի երիտասարդն անմիջապես վայելում է Աճառյանի վստահությունն ու համակրանքը, և հենց այս հանգամանքը դառնում է ճակատագրական ապագա լեզվաբանի համար: Հենց Աղայանին է վստահում իր ձեռագրերի խմբագրման աշխատանքները Աճառյանը. և հենց այդ ժամանակից ի վեր է. Աղայանը հաղորդակից է դառնում հայագիտական պայծառ գաղափարներին ու տարվում դրանցով:

Էդուարդ Աղայանը ծնվել է 1913 թ-ի մարտի 16-ին: Ծնունդով սյունեցի է՝ Մեղրի քաղաքից: Սովորել է տեղի յոթնամյա դպրոցում, այնուհետև՝ ուսումնարանում: Հետաքրքրական է, որ անվանի լեզվաբանն իր երիտասարդ տարիներին աշխատել է որպես հաշվապահ Մեղրու «Նոր կյանք» կոլտնտեսությունում: Մաթեմատիկական այդ մտածողությունն իր անմնացորդ հետքն է թողել լեզվաբանի հայացքներում՝ դրսևորվելով լեզվի կառուցվածքային քննության մեջ: Դեռ վաղ տարիներից Աղայանին գրավել է նաև կրթական գործունեությունը: Իր մանկավարժական գործունեությունը սկսել է Լիճք գյուղի յոթնամյա դպրոցում, որն էլ հետագայում անվանակոչվել է մեծ գիտնականի անունով: Կրթության և գիտության նկատմամբ մեծ սերն Աղայանին ուղղորդում է դեպի Երևանի պետական համալսարան, և 1933 թվականին նա դառնում է պատմագրական ֆակուլտետի ուսանող: Աղայանն առանձնանում է որպես փայլուն և պարտաճանաչ ուսանող, լեզուների մեծ սիրահար: 1941 թ. պաշտպանում է թեկնածուականատենախոսություն՝ իր մայրենի բարբառի

թեմայով, իսկ ընդամենը 4 տարի անց՝ դոկտորական ատենախոսություն՝ («Հայ լեզվաբանության պատմություն» թեմայով):

Իր կյանքի 78 տարիների ընթացքում է. Աղայանը հասցրել է զուգակցել գիտական, կրթական, վարչական, հասարակական աշխատանքները՝ միևնույն ժամանակ իրեն չգրկելով աշխարհիկ կյանքի վայելքներից: Աղայանի գիտական ու կրթական գործունեությունը մինչև կյանքի վերջը կապված է եղել Երևանի պետական համալսարանի և ՀՀ Գիտությունների ակադեմիայի Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հետ: Եղել է ԵՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի խմբագիր, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի փոխտնօրեն, այնուհետև՝ Ընդհանուր լեզվաբանության բաժնի վարիչ, 3 տասնամյակ ղեկավարել է ԵՊՀ ընդհանուր և համեմատական լեզվաբանության ամբիոնը:

Զբաղեցրել է վարչական բարձր պաշտոններ՝ ՀԽՍՀ լուսավորության նախարարության բուհերի բաժնի վարիչ, ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության և հայոց լեզվի գծով գիտական աստիճաններ շնորհող գիտական խորհրդի նախագահ, ՀՀ Գերագույն խորհրդի 1980 և 1985 թթ. գումարումների պատգամավոր:

Է. Աղայանը թողել է գիտական հարուստ ժառանգություն: Իր գիտական գործունեության ընթացքում անդրադարձել է լեզվաբանության գրեթե բոլոր ոլորտների քննությանը՝ ընդհանուր լեզվաբանություն, հայ լեզվաբանության պատմություն, հայոց լեզվի պատմություն, համեմատական քերականություն, բարբառագիտություն, ժամանակակից հայոց լեզու, Արևելքի գրականության պատմություն և այլն:

Ինչպես իր կյանքի վաղ տարիներին, այնպես էլ տարիների հեռվից ակադեմիկոս Աղայանը բարձր է գնահատել կրթության դերը անձի կայացման գործում և իր անմնացորդ ներդրումն է ունեցել ոչ միայն որպես մեծ ուսուցիչ ու դասախոս, այլև որպես դասագրքաստեղծ մասնագետ: Աղայանի թե՛ դպրոցական, թե՛ բուհական դասագրքերը ցայսօր չեն կորցրել իրենց արդիականությունը և սեղանի գիրք են մասնագետ-ուսուցիչների և ուսանողության համար: Լեզվաբանական կրթություն ստացած և ստացող ցանկացած ուսանող կփաստի, որ լեզվաբանության անձայրածիր ոլորտը բացահայտել, տարբեր լեզուների փոխառնչություններին առաջին անգամ հաղորդակից է դարձել հենց Աղայանի «Լեզվա-

բանության ներածություն» և «Լեզվաբանության հիմունքներ» դասագրքերի միջոցով: Այս ձեռնարկներով է բուհական միջավայրում առաջին կուրսեցին ստանում լեզվաճանաչողության առաջին դասերը: Տարիների ընթացքում հեղինակը վերահրատարակել է այս դասագրքերը, ավելին՝ խորհրդային տարիներին այն ռուսերեն թարգմանությամբ կիրառվել է նաև Խորհրդային Միության տարածքում՝ ԽՍՀՄ բարձրագույն կրթության նախարարության կողմից երաշխավորվելով որպես միութենական բուհական դասագիրք: «Լեզվաբանության հիմունքներ» դասագիրքը կարծես լրացնում է «Լեզվաբանության ներածություն» դասագրքում եղած նյութը, հանրամատչելի ձևով ուսանողին է ներկայացնում լեզվաբանության խրթին դրույթները, բացահայտում տարբեր լեզուների ցեղակցական կապերը, գրի ստեղծման և զարգացման փուլերը, լեզվաբանության ուսումնասիրության առարկայի համակողմանի, բայց միևնույն ժամանակ հանրամատչելի նկարագրությունը, ներկայացնում լեզվի ծագման և կառուցվածքի հարցերը և այլն [4; 10]: Նույնպիսի ոճով են գրված նաև Աղայանի դպրոցական դասագրքերը: Այժմ այդ դասագրքերին փոխարինելու են եկել նորերը, ժամանակակիցները, բայց պետք է նշել, որ ցայսօր տարբեր դպրոցների ուսուցիչներ օգտվում են քերականական նյութը ներկայացնելու աղայանական մեթոդից, նրա կազմած վարժություններն ընդգրկում թեստային բազմապիսի առաջադրանքների մեջ:

Դեռևս պատանեկության տարիներից մաթեմատիկական փայլուն մտածողությամբ երիտասարդը չէր կարող սահմանափակվել մեկ լեզվի ուսումնասիրությամբ: Տրամաբանական և դատողական միտքը գիտնականին մղեց դեպի ընդհանուր լեզվաբանության հարցերի քննության ոլորտ: Այս ոլորտի հետազոտական և դասախոսական աշխատանքի արդյունքը դարձան մի շարք աշխատություններ, ինչպես, օրինակ, «Ընդհանուր լեզվաբանության դասընթաց» [3], իսկ հետագայում, նյութը համալրելով նոր փաստերով ու ճշգրտումներով, հեղինակը ներկայացրեց նոր աշխատություններ՝ «Լեզվաբանության ներածություն» [4], «Լեզվի ծագումը և զարգացումը» [6], «Որակական անցումները լեզվի մեջ» [8], «Լեզվական կառուցվածքի մակարդակը» [5]: Այս աշխատություններում անցյալի ձեռքբերումների կողքին երևում է Աղայան հետազոտողի դիմագիծը: Լեզվաբանական ինքնատիպ դիտարկումներ է ներկայացնում հեղինակը հատկապես լեզվի էության վերաբերյալ: Է. Աղայանի բոլոր աշխատություններում լեզուն առաջին հերթին ներկայացվում է որպես

հասարակական երևույթ, և ըստ այդմ էլ՝ լեզվաբանությունը որպես հասարակական գիտություն [10]: *Լեզվի կառուցվածքային մակարդակներին* անդրադառնալիս հեղինակը լեզվաբանությունը ներկայացնում է որպես առանձին, մասնավոր գիտակարգերի միասնություն, որն էլ հանդես է գալիս իր բաժիններով [5]: Որպես հասարակական երևույթ՝ հեղինակի գնահատմամբ լեզվի ամենակարևոր և էական գործառույթը հաղորդակցականն է, ավելին՝ հաղորդակցման բոլոր միջոցներից վեր է դասում լեզվի միջոցով հաղորդակցումը՝ հաղորդակցման միջոցների մեջ ամենակարևորը: Դժվար չէ նկատել, որ հաղորդակցական գործառույթի նման շեշտադրմամբ հեղինակը լեզուն պետք է համարեր մարդկային ձեռքբերում, որը ձևավորում է մտածողությունը, ծառայում է հասարակության բոլոր շերտերին, և դրանով իսկ ստանում համաժողովրդական բնույթ:

Լեզուն որպես կառուցվածք և համակարգ ներկայացնելիս Աղայանը հակված է այն համարել համակարգված կառուցվածք, քանի որ ունի նշանային բնույթ, բացի այդ որպես համակարգ ունի իր տարբերակները՝ տարածական, սոցիալական և ոճական-գործառական: Յուրաքանչյուր տարբերակի համար հեղինակն առանձնացնում է ենթատարբերակներ, ինչպես, օրինակ՝ տարածականի մեջ՝ բարբառներ, ենթաբարբառներ, խոսվածքներ, սոցիալականի մեջ՝ ժարգոններ, ծածկալեզուներ, պաշտամունքային լեզուներ, հասակի ու սեռի հետ կապված տարբերակներ, ոճական-գործառականի մեջ՝ գրական-գեղարվեստական, գիտական, մասնագիտական, պաշտոնական և խոսակցական՝ գրական խոսակցական և ժողովրդախոսակցական: Լեզվական տարբերակների այս դասակարգումը լայնորեն կիրառվում է ցայսօր [10]:

Աղայանը, քաջաձանոթ լինելով համաշխարհային լեզվաբանական մտքի զարգացմանը և պատմությանը, չէր կարող չանդրադառնալ ընդհանուր լեզվաբանական կարևոր թեմաներից մեկին՝ *լեզվական մակարդակների քննությանը*: Աղայանն ընդունում է լեզվական հետևյալ մակարդակները՝ տարրությային, հնչույթային, բառային, ձևաբանական, շարահյուսական, ստորոգային:

«Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը», «Գրաբարի քերականությունը», «Բայի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից հայերենում» աշխատություններում ներկայացվում է հայերենի զարգացման տարբեր փուլերի կառուցվածքային քննությունը՝ հնչյունականից

մինչև քերականական: «*Ընդհանուր և հայկական բառագիտություն*» աշխատության մեջ հեղինակն անդրադառնում է բառագիտական զանազան հարցերի քննությանը՝ թե՛ զուտ բառագիտական, թե՛ իմաստաբանական, թե՛ դարձվածաբանական: Աղայանի բառապաշարային դասակարգումները մինչ օրս կիրառվում են ուսումնական ձեռնարկներում [2]:

Աղայանի գիտական գործունեության անքակտելի մասն են կազմում տերմինաբանական հետազոտությունները: «*Տերմինագիտություն*» աշխատության մեջ ներկայացնում է տերմինագիտական իր դիտարկումները, կատարում դասակարգումներ, քննում տերմինների կազմության հարցեր [9]:

Աղայանի գործունեությունը կարելի էր լիարժեք ու համապարփակ համարել, եթե նույնիսկ նա զբաղվեր միայն բառարանագրական գործունեությամբ, որն ահռելի ջանք, եռանդ ու հետևողական աշխատանք պահանջող, ժամանակատար գործ է: Նրա «*Արդի հայերենի բացատրական բառարանը*», որ պարունակում է 135 հազար բառային միավոր, մինչ օրս ամենակիրառական բառարաններից է հայ լեզվաբանի համար [1]:

«*Հայերենի հնչույթային համակարգի պատմությունից*», «*Հայոց լեզվի պատմության հարցերը նորագույն ուսումնասիրությունների մեջ*», «*Ժամանակակից հայերենի բառապաշարի կադրերելագործումը*», «*Գրաբարի պատմության շրջանաբաժանումը*» աշխատություններում Աղայանն ընդգծվում է որպես հայոց լեզվի պատմության փայլուն գիտակ: Այստեղ քննում է հայերենի ծագման, զարգացման հարցեր, հասնում մինչև զարգացման նոր փուլեր:

«*Հայ լեզվաբանության պատմություն*» երկհատոր ուսումնասիրությունն Աղայանի այն աշխատություններից է, որոնք երիտասարդ լեզվաբանի սիրելի գրքերի շարքում են: Հայ լեզվաբանական միտքը ներկայացվում է իր զարգացման ակունքներից մինչև Աղայանի օրերը [7]:

Աղայան-գիտնականի գործունեությունը չի սահմանափակվել միայն լեզվաբանության սահմաններով: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակում են եղել նաև հայ գրականության և հայ ժողովրդի պատմության հարցերը: Հետաքրքրական են հատկապես նրա դիտարկումները Արևելքի ժողովուրդների գրականության վերաբերյալ:

Նա, իսկապես, հայ լեզվաբանության մեծ երախտավորներ Հ. Աճառյանի, Մ. Աբեղյանի, Գր. Ղափանցյանի, Ստ. Մալխասյանցի գործի

արժանավոր ու հետևողական շարունակողներից է, հայագիտության հայրենանվեր ավանդների անընդհատությունը սրբությամբ պահպանողներից մեկը:

Անկասկած կարող ենք փաստել, որ Է. Աղայանն իր մեծ ուսուցչի արժանի աշակերտն է, նրա գիտական և մասնագիտական որակների լիարժեք ժառանգը: Աղայանի գիտական ժառանգությունը հավերժ լինելու է տարբեր սերունդների ուսումնասիրության և հետազոտության նյութ, լեզվաբանական նյութի աղայանական մատուցմամբ սկսնակ լեզվաբանները մուտք են գործելու լեզվաբանության մեծ աշխարհ:

Գրականության ցանկ

1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:
2. Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, 371 էջ:
3. Աղայան Է., Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Ե., 1947, 280 էջ:
4. Աղայան Է., Լեզվաբանության ներածություն, Ե., 1952, 634 էջ:
5. Աղայան Է., Լեզվական կառուցվածքի մակարդակը, «Բանբեր Երևանի համալսարանի. հաս. գիտ.», 1967, № 1, էջ 73-95:
6. Աղայան Է., Լեզվի ծագումը և զարգացումը, Ե., 1948, 59 էջ:
7. Աղայան Է., Հայ լեզվաբանության պատմություն (Սկզբից մինչև մեր օրերը), հ.1-2, Ե., 1958, 411 էջ:
8. Աղայան Է., Որակական անցումները լեզվի մեջ: Տեղեկագիր / ՀՍՍՌ ԳԱ. հաս. գիտ., 1952, № 9, էջ 25-46:
9. Աղայան Է., Տերմինագիտություն, Ե., 1978, 52 էջ:
10. Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, 736 էջ: